միայն պարտէզը, այլ պահպանում էր մի մշտական զովութիւն, որ ազատում էր բնակիչներին ամառային տօթերից:

Առհասարակ այդ հնացած եւ մաշոած տունը իր ընդարձակութեամբ դարձեալ մեծ յարմարութիւն ունէր քեռուս հոյակապ ընտանիքի համար, որ կազմոած էր բազմաթիւ անդամներից: Մեծ քեռիս, այսինքն մօրս հայրը, դեռ կենդանի էր. նրան բոլորը դադայ (հայր) էին կոչում: Նա հինգ որդի ունէր, բոլորը ամուսնացած, բոլորը բազմաթիւ չափահաս եւ անչափահաս զաւակների տէր էին: Մայրս իր եղբայրների միակ քոյրն էր: Առհասարակ մի հատիկ քոյրը միշտ սիրելի է լինում իր եղբայրներին, բայց մօրս վերաբերութեամբ ընդհակառակն էր պատահել: Մայրս այն հազոագիւտ բնաւորութիւններից էր, որին անկարելի էր չսիրել: Բայց ի՞նչ էր պատճառը, որ նրա եւ իր ազգատոհմի մէջ տիրում էր մի տեսակ խուլ սառնասրտութիւն, մի տեսակ ծածուկ անհամակրութիւն, որը իսկոյն աչքի էր զարկում: Այստեղ մի գաղտնիք կար, որ ինձ համար այն ժամանակ անհասկանալի էր, թէեւ ես չէի կարող չնկատել, որ քեռիներս խիստ անտարբերութեամբ ընդունեցին իրանց քրոջ ամուսնու մահոան ցաւալի բօթը, եւ կարծես ուրախ լինէին, որ աստծու արդար դատաստանը վերջապէս պատժեց նրան: Այդ էր պատճառը, որ մեզ պատահած դժբախտութիւնից յետոյ մայրս խիստ դժոարութեամբ յանձն առեց իր եղբայրների մօտ բնակոիլ, եւ եթէ անճարութիւնն ու աղքատութիւնը չստիպէր նրան, գուցէ այդ ծանր զիջողութիւնը չէր անի:

Քեռուս տան այն մասը, ուր տեղաւորեցին մեզ, բոլորովին զուրկ էր ծառերից: Այստեղ գտնւում էր ախոռատունը, որի բակի մէջ կար փոքրիկ խրճիթ բաղկացած մի սենեակից եւ նախասենեակից, որ շինոած էր ծառաների համար: Եւ որովհետեւ այժմ քեռիս ծառաներ չունէր, խրճիթը մնացել էր բոլորովին անբնակ. այնտեղ պահում էին տան կոտրատոած եւ անպիտանացած կարասիքը: Այդ մթերքներին փոխարինեցինք մենք, որ մեր վիճակով շատ չէինք տարբերւում նրանցից: Այնոամենայնիւ, մենք գոհ մնացինք մեր բախտից, մաքրեցինք խրճիթը իր հին ապականութիւնից, շինեցինք եւ սարքեցինք նրան, թէեւ քայքայոած առաստաղը եւ խարխուլ պատերը բոլորովին անզօր էին անձրեւի հոսանքի առաջը առնելու, կամ պահպանելու մեզ վատ եղանակից:

Գ. ՀԻՆ ՄԵՂՔԸ

Աշունը մօտենում էր իր վախճանին: